ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

31 հուլիսի հինգշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

105
(3136)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

## ԱՌԱՋԻՆ ԿԻՆ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՄՈՒՍՆՈՒՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԵՆ ԿԱՆՉԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ Էջմիածնի նախկին քաղաքապետ Դիանա Գասպարյանի ամուսնուն օրերս կանչել են ՀՀ քննչական կոմիտե՝ վկայի կարգավիճակով հարցաքննության:

Իսկ ինչ են փորձել պարզել քննիչները: Բանն այն է, որ նախկին քաղաքապետի ամուսնու գազալցակայանում մարտի 22-ին սպանություն էր կատարվել, եւ տեսանկարահանող սարքի հիշողության կրիչը անհետացել էր: Իրավապահները փորձել էին հասկանալ՝ որտեղ է հիշողության կրիչը, գազալցակայանի աշխատակիցները նրանց բացատրել էին, թե տեսանկարահանող սարքը հիշողության կրիչ չի էլ ունեցել: Իրավապահները կասկածներ ունեն, որ հիշողության կրիչը միտումնավոր ոչնչացվել է:

Այժմ Գասպարյանի ամուսնուն կանչել են ու վկայի կարգավիճակով հարցաքննել, որպեսզի պարզեն նրա առնչությունը կատարվածի վերաբերյալ:

Սպանությունից անցել է 4 ամիս, եւ ենթադրյալ սպանություն կատարող անձին՝ Արմավիրի մարզում հայտնի «ՃԱՊ» մականունով 33-ամյա Կարեն Բադալյանին իրավապահները դեռ փնտրում են:

Արդյունքում՝ այս դեպքերից 1,5 ամիս անց (կրակոցները տեղի էին ունեցել մարտի 22-ին, Էջմիածնի քաղաքապետի տան խուզարկությունը՝ մարտի 25-ին) Էջմիածնի քաղաքապետ Դիանա Գասպարյանը ստիպված եղավ հրաժարական տալ: Հրաժարականից հետո արդեն Դիանա Գասպարյանը եւ նրա սկեսուրը հայտնվեցին մեղադրյալի աթոռին՝ Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթի շրջանակներում:



Ի՞նչ է սպասվում Սամվել Կարապետյանի աջակցությանը նվիրված հավաքին մասնակցած եւ հետագայում կալանավորված անձանց: «Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի համաձայն՝ առաջիկայում լրանում է գործարար Սամվել Կարապետյանի հավաքին մասնակցած եւ այնուհետեւ կալանավորված անձանց կալանքների ժամկետը, ու նախաքննական մարմինը կա՛մ պետք է նրանց կալանքի ժամկետը երկարաձգի, կա՛մ գործը ուղարկի դատարան: Հիշեցնենք, որ հուլիսի 4-ին հաջակցություն Ս.Կ.-ի կազմակերպած հավաքին մասնակցելուն հարկադրելու, նյութապես շահագրգռելու մի շարք դեպքերի անվան տակ 3 անձի նկատմամբ հարուցվել էր հանրային քրեական հետապնդում, որից հետո նրանք կալանավորվեցին: Հայտնել էինք, որ մարդկանց կալանքի են տանում, բայց չկա մի քաղաքացի, որին իրականում ստիպել են ակցիայի մասնակցել, եւ որը հայտնել է քննիչներին այդ մասին: Պարզապես հնարովի գործերով մարդկանց կալանավորեցին, որպեսզի սարսափ տարածեն:



Ինչպես երեկ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, ՀԷՑ-ի կառավարիչ Ռոմանոս Պետրոսյանը գործի է անցել ու բոլոր «անցանկալի» ղեկավարներին ազատում է աշխատանքից: «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրները փոխանցում են, որ նախօրեին Պետրոսյանն ազատել է ՀԷՑ-ի նախկին տնօրենի երեք տեղակալների, նաեւ 4 խորհրդականների, որոնց թվում են եղել ՀԷՑ-ի սեփականատեր, բարերար Սամվել Կարապետյանի ընկերներից: Նշենք, որ Պետրոսյանն արդեն ազատել է ՀԷՑ-ի 4 մարզային մասնաճյուղերի տնօրենների ու նշանակումներ է պատրաստվում անել: Հիշեցնենք՝ «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացրել էր, որ ՀԷՑ-ի կառավարիչ Ռոմանոս Պետրոսյանը երեկ աշխատանքից ազատել է նաեւ Լիլիա Շուշանյանին, որը 2021 թվականին ազատվել էր ՀՀ ՏԿԵ նախարարի տեղակալի պաշտոնից, ապա նշանակվել էր ՀԷՑ-ում Գլխավոր տնօրենի տեղակալ-Ընդհանուր հարցերով տնօրենի տեղակալ: Մեր աղբյուրները փոխանցում են, որ առաջիկայում կադրային ջարդը շարունակվելու է:

Ադրբեջանի իշխանությունները որոշել են փակել Կարմիր խաչի գրասենյակն ու ընկերության որեւէ ներկայացուցչի թույլ չտալ այցելել հայ գերիներին: «Ժողովուրդ» օրաթերթը հայ գերիների ընտանիքների անդամներից տեղեկացավ, որ ադրբեջանական կողմը արգելել է այսուհետեւ այցելել հայ գերիներին, այդ թվում՝ հայ ռազմաքաղաքական գերիներին: «Ժողովուրդ»-ը տեղեկացավ, որ ռազմաքաղաքական գերիների հարազատներին Կարմիր խաչի գրասենյակից տեղեկացրել են՝ եթե ամիսը մեկ թույլատրված էր իրենց այցելել գերիներին, տեսակապով մի քանի րոպե կապ հաստատել հարազատների հետ, հիմա ադրբեջանական կողմը կտրականապես արգելել է այդ այցելությունները: Գերիների հարազատները հայտնվել են փակուղում. եթե գեթ մեկ հույս կար գոնե Կարմիր խաչի միջոցով կապ հաստատելու գերիների հետ, հիմա այդ հույսն էլ մարեց: Մենք տեղեկացանք, որ ադրբեջանական կողմը որեւէ զիջման չի գնում, իսկ Փաշինյանի խոստացած Խաղաղության համաձայնագիրը օր օրի ավելի մշուշոտ է դառնում: Հիշեցնենք, որ Բաքուն պաշտոնապես հաստատում է 23 հայերի գերեվարման փաստը, որոնցից 17-ը հայտնվել են այնտեղ Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի՝ սեպտեմբերյան ագրեսիայից հետո: Նրանց թվում են Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության ներկայացուցիչները:

ICRC

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

# ԵԿԵՂԵՑՈՒ ՁԱՅՆԸ ԿԱՐՈՂ Է ՓՈԽԵԼ ԱՄԵՆ ԻՆՉ

**Քաղաքական զարգացումների, «Սրբազան պայքարի», ինչպես նաեւ եկեղեցի-պետություն հարաբերությունների վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է «Ժողովրդավարական համախմբում» կուսակցության նախագահ, քաղաքագետ Սուրեն Պետրոսյանի հետ:**

**-Պարոն Պետրոսյան, «Սրբազան պայքարից» հետո Ձեր ակտիվությունը քաղաքական դաշտում զգալիորեն նվազել է՝ համեմատած նախկին ժամանակահատվածի: Ի՞նչն է պայմանավորել այս փոփոխությունը:**

-Մեր գործունեությունն այժմ ավելի ինստիտուցիոնալ մակարդակում է իրականացվում: Պետք է հաշվի առնել նաեւ այն հանգամանքը, որ լրատվամիջոցների մեծ մասը պարզապես արգելափակել է մեր մուտքը: Այլ կերպ ասած՝ մեր գործունեությունը չի լուսաբանվում, եւ դրա պատճառով կարող է թվալ, թե պակաս ակտիվ ենք: Բայց իրականում այդպես չէ:

**-Այս փուլում ի՞նչ աշխատանքներ եք իրականացնում: Կարո՞ղ ենք ենթադրել, որ մասնակցելու եք 2026 թվականի ընտրություններին:**

-Մենք անպայման մասնակցելու ենք ընտրություններին: Դա նույնիսկ քննարկման ենթակա չէ: Կլինի ընտրություն, թե քաղաքական այլ գործընթաց, միեւնույնն է՝ այն պետք է ունենա թիմային հարթակ: Մեզ համար կարեւոր է ինստիտուցիոնալ գործունեություն ծավալել՝ անկախ մեր կողմնակիցների թվից: Պետք է ձեւավորել ցանց, որը կգործի տարբեր մարզերում եւս: Սա չափազանց կարեւոր է. եթե չունես սեփական համակարգ, նույնիսկ ամենալավ գաղափարները չեն կարող արդյունք տալ:

**-Պարոն Պետրոսյան, այս օրերին հասարակության լայն շրջանակներում լուրջ մտահոգություն է առաջացրել եկեղեցի-պետություն հարաբերությունների լարումը: Վարչապետ Նիկոլ Փաշինյանն անընդմեջ կոչեր է հնչեցնում Վեհափառի հրաժարականի վերաբերյալ, իսկ օրերս նույնիսկ հանդես եկավ առաջարկով՝ մտնել Վեհարան եւ այն «ազատագրել Վեհափառից», ինչպես ինքն էր ձեւակերպել: Եթե նման հավաք տեղի ունենա, արդյո՞ք կմասնակցեք: Ինչպե՞ս եք վերաբերվում նման հայտարարություններին:**

-Ես բազմիցս ասել եմ՝ ներկայիս իշխանությունը ոչ միայն ապազգային է, այլեւ հակապետական: Կարծում եմ՝ նորագույն պատմության ընթացքում դժվար է որեւէ երկրում գտնել իշխանություն, որն այս աստիճանի հակադրվի սեփական ազգային ինքնությանը: Սակայն այստեղ կա մի կարեւոր հանգամանք: Եկեղեցու դեմ արշավը ներքին մակարդակում պայմանավորված է նախկին իշխանությունների՝ վերադառնալու փորձերով, իսկ արտաքին մակարդակում՝ թուրքական նարատիվին սպասարկելու միտումով:

Իսկ ով թեկուզ նվազագույն չափով ծանոթ է մեր գործունեությանը, գիտի, որ մենք միշտ կանգնած ենք եղել ազգային յուրաքանչյուր գործընթացի կողքին: Սակայն այս պարագայում մենք չենք ուզում մասնակցել նշված պայքարին: Ըստ իս՝ այս իրավիճակից ճիշտ դուրս գալու ելքը մեկը կարող է լինել. եկեղեցին պետք է ամենաբարձր մակարդակով հնչեցնի, որ իր բոլոր զավակները հավասար են՝ անկախ նրանց քաղաքական հայացքներից: Վեհափառը պետք է հայտարարի, որ չի ընդունում բաժանարար գծեր իր հավատացյալ զավակների միջեւ, եւ որ ինքը որեւէ խմբակի պաշտպանության կարիքը չունի: Այդ պահից սկսած՝ Նիկոլ Փաշինյանի ծրագիրը մի ակնթարթում կփլուզվի: Եկեղեցին կմնա իր բարձրության վրա: Իմ խորին համոզմամբ՝ սա է ճիշտ եւ արժանապատիվ քայլը:

**-Եթե Վեհափառը իսկապես նման ուղերձ հնչեցնի, կարելի՞ է համարել, որ այն, ինչ տեղի ունեցավ Վեհարանում Միքայել Սրբազանի շուրջ, այլեւս չի կրկնվի Կաթողիկոսի նկատմամբ:**

-Տարբեր գործողություններ կարող են իրականացվել թե՛ Վեհափառի, թե՛ ցանկացած հոգեւորականի դեմ: Այստեղ գլխավորը հասկանալն է, թե ինչ նպատակով էլ քայլն արվում: Եթե խոսքը զոհաբերության մասին է հանուն ազգային ինստիտուտի պահպանման, ապա, այո, բոլորս պետք է պատրաստ լինենք անհրաժեշտության դեպքում անգամ ազատազրկման մեջ գտնվել ինչ-որ ժամանակով, որպեսզի մեր ազգային հիմնասյուները կանգուն մնան:

*Զրուցեց*
*ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ*

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

## ՆԱԽԿԻՆ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՑ՝ ՀԷՑ-Ի ԿԱՌԱՎԱՐԻՉ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերության տնօրեն Ռոմանոս Պետրոսյանը աշխատանքից ազատել է նաեւ ընկերության՝ Շիրակի մարզի «Ղարս» մասնաճյուղի տնօրեն Գագիկ Ֆարզադյանին:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Պետրոսյանը պատրաստվում է Ազգային ժողովի նախկին պատգամավոր, Գյումրու քաղաքապետի նախկին թեկնածու եւ ներկայումս քաղաքային ավագանու անդամ Սարիկ Մինասյանի նշանակել «Ղարս» մասնաճյուղի նոր տնօրեն: Ինչպես փոխանցում են մեր աղբյուրները, Սարիկ Մինասյանն արդեն հանձնարարել է ղեկավարել Գյումրու ՀԷՑ-ը:

*ԱՆԱՀԻՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ*

## ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԻ ՀԵՏ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, Ազգային ժողովի Հայաստան-Գերմանիա բարեկամական խմբի ղեկավար Վլադիմիր Վարդանյանը հուլիսի 30-ին հանդիպել է մեր երկրում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Կլաուդիա Բուշի հետ: Հանդիպմանը ներկա է եղել ՀՀ-ում ԳԴՀ փոխդեսպան Լարս Հենիգը:

Վլադիմիր Վարդանյանը կարեւորել է հայ-գերմանական հարաբերությունների զարգացումը՝ նշելով, որ դրանք ունեն ակտիվ եւ դինամիկ ընթացք:

Կողմերն ընդգծել են միջխորհրդարանական կապերի խորացման անհրաժեշտությունը: Դեսպանը հույս է հայտնել, որ սեպտեմբերին իր երկրի նորընտիր խորհրդարանում կձեւավորվի Գերմանիա-Հայաստան բարեկամական նոր խումբ: Այս համատեքստում կարեւորվել են նաեւ խորհրդարանների միջեւ փոխայցերը:

Հանդիպման մասնակիցները խոսել են տնտեսական, մշակույթի եւ զբոսաշրջության ոլորտներում համագործակցությանը վերաբերող հարցերի մասին: Անդրադարձ է կատարվել ՀՀ քաղաքացիների համար Եվրամիության վիզաների ազատականացմանն առնչվող հարցերին:

Դեսպանը վերահաստատել է իր հանձնառությունը՝ աջակցելու երկու երկրների միջեւ հարաբերությունների զարգացմանը:

## ԱՅԼԵՎՍ ՉԻ ԿԱՐՈՂ ԱՅՑԵԼԵԼ ԳԵՐԻՆԵՐԻՆ

Բաքվի բանտում պահվող հայ գերիների հարազատներին միջազգային Կարմիր խաչից փոխանցել են՝ այլեւս չեն այցելելու գերիներին:

«Մեզ՝ ընդհանուր բոլոր գերիների հարազատներին, ասել են, որ Կարմիր խաչը ընդհանրապես չի այցելելու, էլ հարաբերություն չունենք գերիների հետ», - «Ազատությանն» ասել է գերիներից մեկի հարազատը:

Գերիների հարազատների շրջանում այս լուրը լուրջ մտահոգություն է առաջացրել, քանի որ Կարմիր խաչը միակ կառույցն էր, որ կարողանում էր այցելել Բաքվի բանտերում պահվող հայերին, տեղեկանալ նրանց իրական վիճակին, զբաղվել առողջական խնդիրների լուծմամբ, անհրաժեշտ հագուստ ու հիգիենայի պարագաներ փոխանցել, ինչպես նաեւ տեսակապ ապահովել հարազատների հետ:

Ինչպես «Ազատության» հետ զրույցում փոխանցեց գերիներից մեկի հարազատը՝ «թե՛ իրենց, եւ թե՛ գերիների վերջին հույսն» էլ մարեց. - «Էդ կապը, Կարմիր խաչը մեծ հույս էր մեզ համար եւ իրենց համար, որ էլ չկա, մենք արդեն 99 տոկոս հույսից կտրվել ենք, հա՛մ մենք, հա՛մ գերիները: Միակ միջոցը Կարմիր խաչն էր, որ ընտանիքների հետ կապում էր, մի քիչ էդ մարդկանց մոտ լույս էր վառվում, էդ էլ անջատեցիք, էդ էլ կտրեցիք»:

## ԿՀԱՆԴԻՊԵՆ ԲԱՔՎՈՒՄ

Սիրիայի եւ Իսրայելի նախարարները այսօր՝ հուլիսի 31-ին, կհանդիպեն Բաքվում, հաղորդում է «Ֆրանսպրես» գործակալությունը՝ վկայակոչելով դիվանագիտական աղբյուրներին:

Հիշեցնենք, որ լրատվամիջոցները հաղորդել էին անցյալ շաբաթ Ադրբեջանի մայրաքաղաքում անցկացվող նմանատիպ հանդիպման մասին: Սակայն այդ հանդիպման տեղի ունենալու վերաբերյալ որեւէ հաստատում չկար:

Սիրիայի եւ Իսրայելի ներկայացուցիչների միջեւ մեկ հանդիպում արդեն տեղի է ունեցել հուլիսի առաջին կեսին՝ Սիրիայի նախագահ Ահմեդ աշ-Շարաայի Բաքու կատարած այցի շրջանակում: Աշ-Շարաան այդ ժամանակ չի հանդիպել Իսրայելի ներկայացուցիչների հետ:

## ԿԱՆԱԴԱՆ ԻՍՐԱՅԵԼԻՆ ԶԵՆՔ Է ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Կանադան դեռեւս զենք է մատակարարում Իսրայելին՝ չնայած Օտտավայի կողմից սահմանված արգելքին, հաղորդում է The Globe and Mail-ը:

Հրատարակությունը հղում է անում կանադական World Beyond War իրավապաշտպան կազմակերպության ներկայացուցիչ Ռեյչել Սմոլին, ով, վկայակոչելով Իսրայելի հարկային մարմինների տվյալները պնդում է, որ Կանադան շարունակում է Իսրայելին մատակարարել հրազեն եւ փամփուշտներ: Այս կառույցը մասնագիտացած է պաղեստինցիներին օգնություն ցուցաբերելու գործում:

## ԻՐԱՎԻՃԱԿ

# ՖՐԱՆՍԻԱՆ ԿԱՋԱԿՑԻ ԳԱԶԱՅԻՆ

Ֆրանսիան առաջիկա օրերին կսկսի օդից մարդասիրական օգնություն ցած նետել Գազա, հայտարարել է Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարությունը: Ֆրանսիական օդային դեսանտը կիրականացնի «աննախադեպ մասշտաբների մարդասիրական ճգնաժամի բախվող Գազայի քաղաքացիական բնակչության ամենաանհետաձգելի կարիքները բավարարելու համար», - հայտարարել է Ֆրանսիայի ԱԳՆ-ն՝ հավելելով, որ գործողությունների ընթացքում կձեռնարկվեն «առավելագույն նախազգուշական միջոցներ»՝ Գազայի բնակիչների անվտանգությունն ապահովելու համար:

Արտգործնախարարությունը հայտարարել է, որ Ֆրանսիան եւս աշխատում է մարդասիրական օգնությունը ցամաքային ճանապարհով հասցնելու ուղղությամբ, չնայած դա կպահանջի, որ Իսրայելը բացի ավելի շատ սահմանային անցակետեր, ինչը նախկինում հրաժարվել է անել:

Նախարարությունը Իսրայելին կոչ է արել «բացել բոլոր անցակետերը եւ թույլատրել մարդասիրական օգնության անհապաղ, զանգվածային եւ անարգել մուտքը Գազա՝ ցամաքային ճանապարհով»:

Անցյալ տարի Ֆրանսիան, համագործակցելով Հորդանանի հետ, ինքնաթիռներով սննդամթերք եւ հիգիենայի պարագաներ էր տեղափոխել Գազայի հատված:

Ավելի վաղ Իսրայելը եւ Հորդանանը 25 տոննա մարդասիրական օգնություն էին օդից նետել Գազայի հատված:

# ԱՄՆ–Ն ՆՈՐ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐ ԿՍԱՀՄԱՆԻ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ իր վարչակազմը մտադիր է 25% մաքսատուրք սահմանել Հնդկաստանից ներմուծվող ապրանքների վրա: Այս մասին նա հայտնել է լրագրողներին իր ինքնաթիռում՝ Աբերդինից Վաշինգտոն մեկնելիս, հաղորդում է TASS-ը:

Լրագրողների հարցին, թե արդյոք Հնդկաստանի հետ գործարքը վերջնականացված է, ԱՄՆ նախագահը պատասխանել է. «Գիտեմ, որ դա դեռ կարգավորված չէ»:

«Կտեսնենք: Հնդկաստանը լավ ընկեր է եղել, բայց Հնդկաստանը, ըստ էության, ավելի շատ մաքսատուրք է սահմանել, քան գրեթե ցանկացած այլ երկիր: Բայց հիմա ես եմ ղեկավարում, եւ պարզապես հնարավոր չէ այդպես շարունակել», - ընդգծել է Թրամփը:

Ավելի վաղ The Indian Express-ը, հղում անելով իր աղբյուրներին, հայտնել էր, որ Հնդկաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ նոր առեւտրային համաձայնագրի շուրջ խորհրդակցությունները փակուղում են հայտնվել՝ բանակցային գործընթացում զգալի առաջընթացի բացակայության պատճառով: Թերթի տվյալներով՝ Վաշինգտոնը պնդում է, որ ամերիկյան ապրանքները մաքսազերծ մուտք ունենան հնդկական շուկա, մինչդեռ Նյու Դելիի պահանջն է, որ ԱՄՆ-ի սահմանած մաքսատուրքերը հնդկական ապրանքների վրա չգերազանցեն 15%-ը: Բացի այդ, Հնդկաստանը հայտնել է, որ պատրաստ է գնել ամերիկյան զենք, բնական գազ եւ միջուկային ռեակտորներ:

## ՀԵՏՑՆՑՈՒՄՆԵՐ, ՀԱՋԱՐԱՎՈՐ ՏԱՐՀԱՆՎԱԾՆԵՐ ԵՎ ՑՈՒՆԱՄԻԻ ՎՏԱՆԳ

# ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄԵՆԱՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԸ

**Հուլիսի 30-ին Կամչատկայի երկրամասում տեղի ունեցավ պատմության մեջ ամենաուժեղ երկրաշարժերից մեկը, որի ուժգնությունը, ըստ տարբեր գնահատականների, հասել է 8.7 մագնիտուդի: Սեյսմոլոգները երկրաշարժը գրանցել են Պետրոպավլովսկ-Կամչատսկի քաղաքից մոտ 150 կիլոմետր հեռավորության վրա, իսկ էպիկենտրոնը գտնվել է մարզկենտրոնից 149 կիլոմետր հարավարեւելք, 17 կիլոմետր խորության վրա: Երկրաշարժի ցնցումները Կամչատկայում զգացվել են 7-8 բալ ուժգնությամբ, իսկ հետցնցումները շարունակվել են ժամեր շարունակ՝ հասնելով 5.1-5.8 մագնիտուդի: Ընդամենը մեկ ժամում Կամչատկայի ափին տեղի է ունեցել ութ երկրաշարժ՝ 5 մագնիտուդից բարձր, իսկ ընդհանուր առմամբ, երկրաշարժից հետո գրանցվել է ավելի քան 50 հետցնցում:**

Երկրաշարժից անմիջապես հետո Կամչատկայի ափին հայտարարվեց ցունամիի վտանգ: Ելիզովսկի շրջանում՝ Վոդոպադնայա օդերեւութաբանական կայանի մոտ, արձանագրվեց 3-4 մետր բարձրությամբ ցունամիի ալիք: Ցունամիի առաջին ալիքը հարվածեց Սեւերո-Կուրիլսկ քաղաքի ափին, ինչի հետեւանքով բնակիչները տարհանվեցին դեպի ավելի բարձրադիր վայրեր: Ընդհանուր առմամբ, Կուրիլյան կղզիներում մոտ 2,700 մարդ տարհանվեց անվտանգ վայրեր: Սեւերո-Կուրիլսկի նավահանգիստը եւ ձկնորսական ձեռնարկությունը ջրածածկվեցին, իսկ Պետրոպավլովսկ-Կամչատսկիում մանկապարտեզի պատերը փլուզվեցին. բարեբախտաբար զոհեր չկան: Մի քանի մարդ դիմել է բժշկական օգնության, իսկ շտապօգնության կանչերի թիվը զգալիորեն աճել է:

Երկրաշարժի հետեւանքով Կամչատկայում ժամանակավորապես խափանվել է ինտերնետ կապը, սակայն հետագայում բոլոր կապի հանգույցները վերականգնվել են: Մարզի պետական կառույցներում աշխատանքային օրը կրճատվել է մինչեւ 13:00, իսկ քաղաքային թիվ 1 մանկական պոլիկլինիկան ժամանակավորապես փակվել է տեխնիկական զննության համար: Տարհանվել են նաեւ Կամչատկայի հինգ սերֆինգի ճամբարները: Իշխանությունները խոստացել են բնակիչներին ապահովել ժամանակավոր կացարաններով, եթե բնակարաններում հայտնաբերվեն վտանգավոր ճաքեր: Ստեղծվել է տարածաշրջանային շտաբ՝ տարբեր ծառայությունների գործողությունները համակարգելու համար, իսկ Կուրիլյան կղզիներում գործարկվել է թեժ գիծ բնակիչների համար: Սախալինի մարզի իշխանությունները մոբիլիզացրել են ուժերն ու ռեզերվները՝ Սեւերո-Կուրիլսկում երկրաշարժի հետեւանքները վերացնելու համար: Կամչատկայի մարզի կառույցների վնասների ընդհանուր գնահատականը պատրաստ կլինի շաբաթվա ընթացքում:

Կամչատկայում այդ պահին եղել է մոտ 7,000-8,000 զբոսաշրջիկ, սակայն նախնական տվյալներով՝ ռուս զբոսաշրջիկները երկրաշարժի հետեւանքով չեն տուժել:

Երկրաշարժը ստացել է նաեւ միջազգային արձագանք: Ճապոնիայի հյուսիսային հատվածում արձանագրվել է մոտ 30 սանտիմետր բարձրությամբ ցունամիի ալիք: Ճապոնիայի ինքնապաշտպանական ուժերը օդային հսկողություն են իրականացրել, դադարեցվել է արագընթաց գնացքների երթեւեկությունը, իսկ Սենդայ քաղաքի օդանավակայանը փակվել է: Վնասներ եւ զոհեր Ճապոնիայում չեն գրանցվել: ԱՄՆ Օվկիանոսի եւ մթնոլորտի ազգային վարչությունը երկրաշարժից հետո ցունամիի նախազգուշացում է հայտարարել, իսկ Օահու կղզու իշխանությունները կոչ են արել ափամերձ շրջանների բնակիչներին անհապաղ տարհանվել: ԱՄՆ առափնյա պահպանության ծառայությունը հրահանգել է Հավայան կղզիներում գտնվող բոլոր նավերին լքել նավահանգիստները: Չիլիի, Էկվադորի, Մեքսիկայի եւ Պերուի իշխանությունները նույնպես նախազգուշացումներ են տարածել իրենց ափամերձ շրջանների համար: Չինաստանի իշխանությունները հայտարարել են ցունամիի սպառնալիքի մասին, որը կարող է ազդել Շանհայի, Չժեցզյան նահանգի հարավային մասի եւ Թայվանի ափերին:

Մասնագետները կանխատեսում են, որ հետցնցումները Կամչատկայում կարող են շարունակվել առնվազն մեկ ամիս՝ մինչեւ 7.5 մագնիտուդ ուժգնությամբ: Տեղական եւ միջազգային ծառայությունները շարունակում են հետեւել իրավիճակին եւ իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ՝ բնակչության անվտանգությունն ապահովելու համար:

*ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ*

## ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

# ԷՐԴՈՂԱՆԸ ՏՈԿԱԵՎԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼ Է

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը նախագահական պալատի Բեշտեփե Միլլեթ ցուցասրահում կայացած արարողության ժամանակ Ղազախստանի նախագահ Կասիմ Ժոմարտ Տոկաեւին հանձնել է երկրի բարձրագույն պետական պարգեւը՝ Դեւլեթ Նիշանիի շքանշանը: Իր ելույթում Էրդողանը նշել է, որ Տոկաեւի իմաստուն ղեկավարության ներքո Ղազախստանը դարձել է տարածաշրջանում խաղաղության եւ կայունության աղբյուր: Թուրքիայի նախագահը ընդգծել է երկրների միջեւ ռազմավարական համագործակցության հաջող զարգացումը՝ նշելով Ղազախստանի դերը Թյուրքական պետությունների կազմակերպության ամրապնդման գործում:

«Ես հավատում եմ, որ դուք մեր Պետական շքանշանը կհամարեք մեր երկրների միջեւ անխզելի եղբայրական կապի հզոր խորհրդանիշ եւ կկրեք այն հպարտությամբ: Թող Ամենակարողը պահպանի մեր բարեկամությունը», - եզրափակել է Թուրքիայի նախագահը:

# ՊԵՆՏԱԳՈՆԻ ՂԵԿԱՎԱՐԸ ԿԱՐՈՂ Է ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ՏԱԼ

«ԱՄՆ պաշտպանության նախարար Փիթ Հեգսեթը դիտարկում է հաջորդ տարի Թենեսիի նահանգապետի ընտրություններին մասնակցելու հնարավորությունը: Դրա համար նա ստիպված կլինի լքել Պենտագոնի ղեկավարի պաշտոնը, հայտնում է NBC News հեռուստաալիքը՝ վկայակոչելով իր աղբյուրները», - փոխանցում է ՏԱՍՍ-ը:

Նրանց տեղեկությունների համաձայն՝ Հեգսեթը վերջին երեք շաբաթների ընթացքում լրջորեն քննարկում է պաշտոնի համար առաջադրվելու եւ քարոզարշավ սկսելու հնարավորությունը:

Այնուամենայնիվ, Պենտագոնի կանոնների համաձայն, Հեգսեթի մասնակցությունը նահանգապետի ընտրություններին կպահանջի նրա հրաժարականը պաշտպանության նախարարի պաշտոնից:

NBC News-ը նշում է, որ սա կլինի ամերիկյան պաշտպանության նախարարության ղեկավարության ամենամեծ վերադասավորումը:

# ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Ֆրանսիայում ՀՀ դեսպան Արման Խաչատրյանը հանդիպել է Ֆրանսիայի Ջինված ուժերի գլխավոր շտաբի պետ, բանակի գեներալ Տիերի Բյուրկարդին:

Դեսպանության փոխանցմամբ՝ հանդիպմանը քննարկվել են Հայաստանի եւ Ֆրանսիայի միջեւ բարեկամական հարաբերություններին, այդ թվում՝ պաշտպանական համագործակցությանն առնչվող հարցերի լայն շրջանակ:

Բացի այդ, նաեւ մտքեր են փոխանակվել տարածաշրջանային անվտանգությանն առնչվող հարցերի վերաբերյալ:

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԳՈՐԾԸ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ Է

# ԴԱՐՁՅԱԼ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԴԱՇՏՈՒՄ

**ArmLur.am-ին երեկ հայտնի դարձավ, որ նախկին վարչապետ Հովիկ Աբրահամյանի դեմ հարուցված քրեական գործը ուղարկվեց դատարան:**

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ նախկին վարչապետ Հովիկ Աբրահամյանի խափանման միջոց տնային կալանքը փոխվել է, եւ ՀՀ վերաքննիչ դատարանը խափանման միջոց է կիրառել վարչական վերահսկողությունը:

Տեղեկությունը ArmLur.am-ի հետ զրույցում հաստատեց վերջինիս պաշտպան Երեմ Սարգսյանը՝ նշելով, որ Հովիկ Աբրահամյանի նկատմամբ արդեն շուրջ 6 տարի է կիրառված է չհեռանալու մասին ստորագրություն խափանման միջոցը եւ նա երբեւէ չի խախտել այդ խափանման միջոցի պայմանները, ինչն էլ իրավաբանորեն բացառում էր նրա նկատմամբ առավել խիստ խափանման միջոց կիրառելը:

Չնայած դրան՝ ՀՀ հակակոռուպցիոն դատարանը նրա նկատմամբ որպես խափանման միջոց էր կիրառել տնային կալանքը, որի դեմ էլ վերաքննիչ բողոք էր ներկայացվել եւ վերաքննիչ դատարանը վերացրել էր տնային կալանքը՝ որպես խափանման միջոց կիրառելով վարչական հսկողությունը:

Ըստ պաշտպան Երեմ Սարգսյանի՝ վերաքննիչ դատարանի որոշումը չեն բողոքարկելու ՀՀ վճռաբեկ դատարան, քանի որ քննիչը տեղեկացրել է, որ քրեական վարույթի նախաքննությունն ավարտվել է եւ քրեական գործն ուղարկում է դատարան, ինչն էլ նշանակում է, որ ժամանակի առումով նրանք չեն հասցնի վճռաբեկ բողոք ներկայացնել. ուստի խափանման միջոցի վերաբերյալ բոլոր հարցերն այսուհետեւ դատաքննության փուլում պետք է քննարկվեն:

2018 թվականից սկսած քրեական հետապնդումների գործընթացում գտնվող Հովիկ Աբրահամյանը մեկ ամիս առաջ կրկին հայտնվեց իրավապահների տեսադաշտում:

Հիշեցնենք, որ այս տարվա հունիսի 13-ին Հովիկ Աբրահամյանը հանրության համար անակնկալ կերպով ձերբակալվեց, ապա դատարանը որոշեց նրա նկատմամբ տնային կալանքի ռեժիմ սահմանել: Հակակոռուպցիոն կոմիտեի փոխանցմամբ՝նրան մեղադրանք է առաջադրվել մի քանի հոդվածներով՝փողերի լվացում, պաշտոնեական լիազորությունների չարաշահում եւ ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցություն:

Իսկ իրականում Հովիկ Աբրահամյանը Նիկոլ Փաշինյանի իշխանության տեսադաշտում է հայտնվել այն բանից հետո, երբ Երեւանում հանդիպել է Սամվել Կարապետյանին եւ միասին տեսակցել են Ռուսաստանի Դաշնության ԱԳ նախարար Սերգեյ Լավրովին:

Հովիկ Աբրահամյանին կասկածում են հեղաշրջման փորձի համար:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

## ՏՈՆՈՅԱՆԻ ԳՈՐԾԸ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼՈՒՄ Է

ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանի դեմ հարուցված քրեական գործը հասել է ճառերի փուլին: Առաջիկայում պաշտպանական կողմերը ճառերով հանդես կգան, որից հետո մեղադրյալները կասեն իրենց վերջին խոսքը:

Հիշեցնենք, որ ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանը մեղադրվում է առանձնապես խոշոր չափերով՝ 2 մլրդ 277 մլն 323 հազ. 840 դրամ գումար հափշտակելու, կեղծիքներ, հանրորեն վտանգավոր արարքներ կատարելու համար:

Այս գործով մեղադրանք է առաջադրվել նաեւ ԳՇ պետ Արտակ Դավթյանին: Դատական նիստերը շուրջ 4 տարի է ընթանում են դռնփակ:

## ԴԱՏԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄ

Սամվել Կարապետյանի պաշտպան Լիանա Գասպարյանը հայտնում է. «Դատարանի որոշմամբ Սամվել Կարապետյանի բնակարանի խուզարկությունը կատարվել է ապօրինի. 2025 թվականի հունիսի 18-ին Սամվել Կարապետյանի բնակարանում խուզարկություն կատարելու թույլտվություն տալու մասին առաջին ատյանի դատարանի դատավոր Արտակ Կարապետյանի (ընդ որում՝ Արտակ Կարապետյանը Սամվել Կարապետյանին կալանավորած դատավորն է) կողմից կայացված որոշման դեմ ներկայացված հատուկ վերանայման բողոքը բավարարվել է, ինչի արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն արձանագրել է Սամվել Կարապետյանի իրավունքի խախտման փաստը: Ինչով հստակ փաստվում է, որ խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու համար ի սկզբանե բացակայել են բավարար փաստական հիմքերը, ինչի արդյունքում Սամվել Կարապետյանի բնակարանում կատարված խուզարկությունը կրել է բացահայտ ապօրինի բնույթ», - հայտնում է նա:

## ՇԱՆԸ ՔԱՐՇ ՏԱԼՈՒ ԴԵՊՔԸ՝ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Վարդան Արամայիսի Ղարսոյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 2025 թվականի հուլիսի 15-ին՝ ժամը 11:30-ի սահմաններում, Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաքի Ջորավար Անդրանիկի փողոցում կենդանու նկատմամբ դաժան վերաբերմունք է ցուցաբերել. մասնավորապես, իր կողմից վարվող «Օպել» մակնիշի 37 MS 804 հաշվառման համարանիշի ավտոմեքենայից կապել է թափառական շանը եւ քարշ տալով տարել կենդանուն՝ այդ կերպ թափառական շան նկատմամբ այլ դաժան վերաբերմունք կիրառել եւ պատճառել վնասվածքներ, որոնք դրսեւորվել են շան չորս թաթերի քերծվածքների եւ վերքերի ձեւով:

Հիշեցնենք, որ սոցիալական ցանցերում արագորեն տարածվում էր մի տեսանյութ, որտեղ մի տղամարդ շանը կապել էր իր մեքենայի հետեւից ու քարշ էր տալիս: Քաղաքացիները տեսանկարահանել էին կատարվածը: Ճանաչողները գրել էին, որ տղամարդը Բյուրեղավանից է:

*Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ*

## ԲՌՆԱԳԱՆՁՈՒՄ

Հակակոռուպցիոն դատարանը վարույթ է ընդունել Գլխավոր դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հերթական հայցադիմումը:

Գլխավոր դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը պահանջ է ներկայացրել դատարանին՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի նախկին խորհրդական Աշոտ Հակոբյանից եւ նրան փոխկապակցված անձանցից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

. 2 անշարժ գույք՝ Երեւան քաղաքում,

. 2 տրանսպորտային միջոց,

.124 միլիոն 570 հազար դրամ՝ որպես ապօրինի դրամական միջոցների մնացորդ,

. 79 միլիոն 540 հազար դրամ, որը չի հիմնավորվում անձի օրինական եկամուտներով, ունի ապօրինի ծագում, փոխանցվել է բարեխիղճ ձեռքբերողի կամ հնարավոր չէ նույնականացնել եւ բռնագանձել:

ԻՐԱՎԻՃԱԿ

## ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԴԵՊՔ՝ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ

Հուլիսի 29-ին ողբերգական դեպք է տեղի ունեցել Կոտայքի մարզում: Ժամը 13:20-ի սահմաններում ՀՀ Ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության Կոտայքի մարզային վարչությունում եւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Կոտայքի բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Երեւան-Սեւան ավտոճանապարհի Ձրաբերի ավազահանքերի տարածքում տղամարդու դի կա:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, նշված վայր են ժամանել քրեական ոստիկանության գլխավոր վարչության Կոտայքի մարզային վարչության պետ Արթուր Ձաքարյանը, համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Կոտայքի բաժնի պետ Բաբկեն Աղաբաբյանը եւ բաժնի պետի տեղակալ Արսեն Սարգսյանը:

Տեղում պարզվել է, որ ստացված օպերատիվ տեղեկությունը հավաստի է եւ ավազահանքի տարածքում ոստիկանները ու պարեկները հայտնաբերել են Կոտայքի մարզի բնակիչ 34-ամյա Նորայր Ն.-ի դին:

Դատաբժշկի նախնական եզրակացության համաձայն՝ արտաքին զննությամբ դիակի վրա բռնության հետքեր չեն հայտնաբերվել: Դեպքի մասին ոստիկանության Կոտայքի բաժնից տեղեկությունը փոխանցել են ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժին, որտեղից ժամանել է քննչական խումբը՝ վարչության պետ Հովհաննես Չալաբյանի, վարչության պետի տեղակալ Աշոտ Մելքումյանի, Աբովյանի քննչական բաժնի պետ Սերգեյ Ավագյանի եւ օրվա պատասխանատու հերթապահ քննիչի գլխավորությամբ:

Պարզվել է, որ մահացածը բեռնատարի թափքը ծածկելու ժամանակ անզգուշաբար դիպել է հոսանքի լարերին, ինչի հետեւանքով հոսանքահարվել եւ տեղում մահացել է: Դեպքի փաստով Աբովյանի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ:

## ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՐԿԱԴԻՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ

Արդարադատության նախարարությունից հայտնում են, որ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունները առավել հասանելի դարձնելու համար ստեղծվել է QR կոդ՝ «Անձնական գրասենյակ» կատարողական վարույթների էլեկտրոնային հարթակ մուտք գործելու եւ FACE ID թվային գործիքի միջոցով գրանցվելու համար, իսկ cesa.am կայքի դեսքթոփ ու մոբայլ տարբերակների ինտերֆեյսի վրա ավելացվել են «Տե՛ս քո արգելանքը» ինտերակտիվ կոճակներ, որոնք քաղաքացուն ուղղորդում են միանգամից Face ID հարթակում գրանցման ուղեցույցը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝հուլիսի 28-ից 29-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 118 դեպք, որից 5-ը՝նախկինում կատարված:*

# ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՄԱՐԶ

### ՇԻՆԱՆՅՈՒԹԸ՝ ՈՐՊԵՍ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎՃԱՐ

Տավուշի մարզում հանրակրթական դպրոցները, բացի ավագ դպրոցներից եւ վարժարաններից, գործում են Տավուշի մարզպետարանի անմիջական ենթակայությամբ: Տավուշի մարզպետ Հ. Ղալումյանին հարցրել ենք. «Նոյեմբերյանի հիմնական դպրոցի շենքի շինարարությունը ե՞րբ է սկսվելու, ե՞րբ է ավարտվելու, ո՞ր կազմակերպությունն է այն իրականացնում: Դպրոցի եռահարկ շենքից հանված տախտակները, եվրոպատուհանները ո՞ւր են տարվում, դրանք այսուհետեւ որտե՞ղ, ո՞ւմ կողմից են օգտագործվելու»: Մարզպետարանից պատասխանել են. «Նոյեմբերյանի հիմնական դպրոցի շինարարական աշխատանքները մեկնարկել են: Շինարարական կազմակերպության անվանման մասով առաջարկում ենք դիմել քաղաքաշինության կոմիտեին: Շինանյութերի մասով /տախտակներ, եվրոպատուհաններ/ տեղեկացնում եմ, որ դպրոցաշինական ծրագրերում հին մասնաշենքի քանդման համար նախահաշվարկային փաստաթղթերում որեւէ դրամական միջոց չի տրամադրվում, փոխարենը թույլատրվում է քանդվող շինանյութերը տրամադրել կապալառու կազմակերպության տնօրինմանը»: Մարզպետն անտեղյակ է, թե իր ենթակայությամբ գործող Նոյեմբերյանի հիմնական դպրոցի նոր շենքի շինարարությունը որ կազմակերպությունն է իրականացնում:

### ՉԵՆ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ՕԳՏՎԵԼ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին ապրիլի 10-ին տեղեկատվական հարցում ենք արել, որ «սահմանամերձ Բերքաբեր, Կիրանց, Աճարկուտ, Բարեկամավան գյուղեր բնական գազ է անցկացվել, սակայն բնակիչները գազատարից իրենց տներ ճյուղավորումներ անցկացնելու, գազատարին միանալու համար պահանջվող գումարը չունեն: Այս խնդիրը ինչպե՞ս է լուծվելու»: Մարզպետարանից պատասխանել են. «2024 թվականին սուբվենցիոն ծրագրով Բերքաբեր, Կիրանց եւ Աճարկուտ բնակավայրերը գազիֆիկացվել են, իրականացվում են չափագրման աշխատանքներ եւ իրավական կարգավիճակ (սեփականության վկայականներ) տրամադրելուց հետո կիրականացվեն ներտնային գազիֆիկացման աշխատանքներ, իսկ Բարեկամավան բնակավայրում իրականացվել են ներտնային ցանցի 6 կառուցման աշխատանքներ՝ 68 տնտեսություն ապահովված է բնական գազով»: Մայիսի 5-ին նոր հարցում ենք ուղարկել մարզպետին. «Ի պատասխան մեր՝ ապրիլի 10-ի հարցման, հայտնել եք, որ Բարեկամավան բնակավայրում իրականացվել են ներտնային ցանցի 6 կառուցման աշխատանքներ, 68 տնտեսություն ապահովված է բնական գազով: Այդ 68 տնտեսությունները երբվանի՞ց են բնական գազ օգտագործում: Մարզպետարանից հայտնել են. «Բարեկամավան բնակավայրի 68 տնտեսություն բնական գազով կապահովվի իրավական կարգավիճակ տրամադրելուց հետո»:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

## ՈՒՄ Է ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԱԶԱՏԵԼ ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ

# ՀԷՑ-ՈՒՄ ԿԱԴՐԱՅԻՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳ Է

**ArmLur.am-ի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ Լիլիա Շուշանյանը, ով 2021 թվականին ազատվել էր ՀՀ ՏԿԵ նախարարի տեղակալի պաշտոնից, այդ նշանակվել էր ՀԷՑ-ում Գլխավոր տնօրենի տեղակալ, ՀԷՑ-ի ժամանակավոր կառավարիչ Ռոմանոս Պետրոսյանի կողմից երեկ ազատվել է աշխատանքից:**

Նշենք նաեւ, որ Լիլիա Շուշանյանը ՀԷՑ-ում Գլխավոր տնօրենի տեղակալ-Ընդհանուր հարցերով տնօրենի տեղակալն էր:

Հիշեցնենք՝ մամուլում գրվել էր, որ Գնել Սանոսյանի՝ տարածքային կառավարման նախարար նշանակվելուց հետո նախարարի տեղակալ Լիլիա Շուշանյանը սեպտեմբերի 2-ին անակնկալ ազատվեց, ինչը տարբեր մեկնաբանությունների առիթ տվեց: Նախարարությունը չէր պարզաբանում ազատման պատճառը:

Շուշանյանը, հիշեցնենք, կառավարություն է եկել Հովիկ Աբրահամյանի ժամանակ, ապա աշխատել է Կարեն Կարապետյանի օրոք, համարվում էր ՀՀԿ-ական Դավիթ Հարությունյանի «կադրը»: Գնահատելով նրա փորձը՝ Սուրեն Պապիկյանը նրան հրավիրել էր տարածքային կառավարման նախարարություն: Պապիկյանի՝ փոխվարչապետ նշանակվելուց հետո Շուշանյանն ազատվեց աշխատանքից:

Իսկ ինչ կենսագրություն եւ աշխատանքային փորձ ունի նա: Լիլիա Շուշանյանը ծնվել է 1991 թ. մայիսի 26-ին Երեւանում: 2008թ. ավարտել է Դ. Վարուժանի անվան թիվ 89 միջնակարգ դպրոցը: 2008-2012 թթ. սովորել է ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետում՝ «Հանրային կառավարում» մասնագիտությամբ:

2014թ. ավարտել է նույն ֆակուլտետը՝ ստանալով Հանրային կառավարման մագիստրոսի աստիճան:

2012թ. ճանաչվել է ԵՊՀ լավագույն ուսանող:

2014-2015թթ. եղել է ՀՀ կառավարության աշխատակազմի գլխավոր գործավար:

2015-2016թթ.՝ ՀՀ կառավարության աշխատակազմի փորձագետ: 2016-2017թթ.՝ ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի խորհրդատու:

2017-2018թթ. նշանակվել է ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի խորհրդական՝ հասարակական հիմունքներով:

2017-2018թթ.՝ ՀՀ կառավարության աշխատակազմի եւ ԱՄՆ ՄԶԳ «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում» ծրագրի ղեկավար:

2018-2019թթ.՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի ներքո գործող Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության քարտուղարության ղեկավար:

2019 թ. ապրիլի 9-ին ՀՀ վարչապետի որոշմամբ նշանակվել է ՏԿԶ նախարարի տեղակալ:

*ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

## ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

### ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ՝ ԻՍՐԱՅԵԼԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Բրազիլիան հայտարարել է, որ որոշել է պատժամիջոցներ կիրառել Իսրայելի նկատմամբ՝ դիվանագիտական, առեւտրային եւ ռազմական կապերի սահմանափակմամբ, ի պատասխան Գազայի դեմ Իսրայելի 2023 թվականի հոկտեմբերից շարունակվող պատերազմին, որը Բրազիլիան որակել է որպես ցեղասպանություն:

ՄԱԿ-ում Պաղեստինի հարցով բարձր մակարդակի համաժողովի ժամանակ Բրազիլիայի արտգործնախարար Մաուրո Վիեյրան հայտարարել է, որ Բրազիլիան դադարեցնում է Իսրայելին ռազմական տեխնիկայի արտահանումը: Նա նաեւ նշել է, որ երկիրը սկսում է հետաքննություններ՝ կապված Արեւմտյան ափի օկուպացված տարածքներում գտնվող անօրինական բնակավայրերից ներմուծվող ապրանքների հետ:

Այս հայտարարությունը հաջորդել է Բրազիլիայի ավելի վաղ որոշումներին՝ դադարեցնել Իսրայելից ռազմական գնումները, հետ կանչել իր դեսպանին Թել Ավիվից եւ հետաձգել Բրազիլիայում նոր իսրայելցի դիվանագետի նշանակումը:

Վիեյրան նշել է, որ «երբ առկա են ցեղասպանության վերաբերյալ վստահելի մեղադրանքներ, միջազգային իրավունքը պարզապես հիշատակելը բավարար չէ. այն պետք է կիրառել վճռականությամբ»:

Նա հղում է արել Միջազգային դատարանի 2024 թվականի ուղեցույցներին, որոնք կոչ են անում պետություններին կատարել իրենց պարտավորությունները օկուպացված պաղեստինյան տարածքների վերաբերյալ, ընդգծելով Բրազիլիայի հանձնառությունը՝ ապահովելու պատասխանատվություն:

Բրազիլիայի արտգործնախարարը հավելել է, որ իր երկիրը «չի հանդուրժի Իսրայելի շարունակական անպատժելիությունը»:

Նա նաեւ նշել է, որ Բրազիլիան որոշել է ակտիվորեն մասնակցել Հարավային Աֆրիկայի կողմից Իսրայելի դեմ Միջազգային դատարանում ներկայացված ցեղասպանության գործին՝ հիմնված Ցեղասպանության կոնվենցիայի վրա:

Բրազիլիան, ըստ Վիեյրայի, աջակցում է նաեւ ՄԱԿ-ի Ապարտեիդի դեմ հատուկ կոմիտեին նմանատիպ մեխանիզմի ստեղծմանը՝ Իսրայելի կողմից պաղեստինցիների նկատմամբ ծայրահեղ ռասայական խտրականության դեմ պայքարելու համար:

### ՄԵՂԱԴՐԵԼ Է ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ

Իսրայելի վարչապետ Բենիամին Նետանյահուն մեղադրել է Մեծ Բրիտանիայի վարչապետ Քիր Սթարմերին՝ ՀԱՄԱՍ-ի «հրեշավոր ահաբեկչությունը» խրախուսելու համար, այն բանից հետո, երբ Լոնդոնը հայտարարեց Պաղեստինը որպես անկախ պետություն ճանաչելու ծրագրերի մասին:

«Սթարմերը խրախուսում է ՀԱՄԱՍ-ի հրեշավոր ահաբեկչությունը եւ պատժում է դրա զոհերին», - գրել է Իսրայելի կառավարության ղեկավարը X սոցիալական ցանցում:

Նեթանյահուն նաեւ հավելել է. «Այսօր Իսրայելի սահմանին ջիհադիստական պետության ստեղծումը վաղը սպառնալիք կլինի Բրիտանիայի համար», ընդգծելով, որ «դա չի լինելու»:

Ավելի վաղ Իսրայելի ԱԳՆ-ն հայտարարել էր, որ Իսրայելը մերժում է Սթարմերի հայտարարությունը՝ այն որակելով որպես «պարգեւ ՀԱՄԱՍ-ին»: ԱԳՆ-ի հայտարարության մեջ նշվում է, որ Լոնդոնի ծրագրերը վնասում են Գազայում հրադադարի եւ պատանդների ազատ արձակման շուրջ համաձայնության հասնելու ջանքերին:

Երեքշաբթի օրը Սթարմերի գրասենյակը հայտարարություն էր տարածել, որում նշվում էր, որ Մեծ Բրիտանիան պատրաստ է ճանաչել Պաղեստին պետությունը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի սեպտեմբերյան նստաշրջանից առաջ, եթե Իսրայելը շարունակի արգելափակել հումանիտար օգնությունը Գազա եւ ռազմական գործողություններ իրականացնել անկլավում:

Հիշեցնենք, որ հուլիսի 24-ին Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնն էլ հայտարարել էր, որ Փարիզը եւս պատրաստ է սեպտեմբերին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նիստում ճանաչել Պաղեստին պետությունը:

*Թարգմանությունները՝*
*ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ*

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 15 պատահար, 25 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾԱՐԿՎԵԼ Է «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿԻ» ՆՈՐ ԿԱՅՔԸ

«Հայէկոնոմբանկը» գործարկել է իր նոր պաշտոնական կայքը՝ նորագույն լուծումներով եւ հաճախորդների համար ավելի հարմար ու ֆունկցիոնալ հնարավորություններով:

Նոր կայքի յուրաքանչյուր էջ եւ գործիք ստեղծվել է պարզության, հարմարության եւ անվտանգության պահպանման սկզբունքների հիման վրա:

Բանկի նոր կայքն առանձնանում է ժամանակակից, նորառոճ դիզայնով, կառուցվածքի եւ բովանդակության հստակությամբ, ինչպես նաեւ հեռավար սպասարկման գործիքակազմով: Այն պարզապես տեխնիկական թարմացում չէ, այլ՝ միջազգային լավագույն փորձի հիման վրա ստեղծված թվային հաղորդակցման հարթակ, որտեղ բացի օգտակար տեղեկատվություն ստանալուց, հնարավոր է ներկայացնել վարկային հայտ, պատվիրել վճարային քարտ եւ օգտվել մի շարք այլ առցանց ծառայություններից:

Երկարատեւ ստեղծագործ աշխատանքի արդյունքում ստեղծված նոր թվային տունն էլ ավելի հասանելի է դարձնելու «Հայէկոնոմբանկի» կողմից առաջարկվող ծառայությունները, քանի որ առավելագույն չափով հաշվի են առնվել հաճախորդների տարբեր խմբերի կարիքներն ու սպասումները:

«Հայէկոնոմբանկը» շարունակում է ներդնել նորագույն թվային լուծումներ՝ բանկային ծառայությունների որակը եւ հաճախորդների փորձառությունը շարունակաբար բարելավելու նպատակով:

## ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ԱՄՌԱՆ ՇՈԳԻՆ

Ընտանեկան բժշկության գծով ԱՆ խորհրդատու Սամվել Հայրումյանը ներկայացրել է, թե ինչպես կարելի է ամռան շոգին պաշտպանել ընտանիքի բոլոր անդամներին:

Խմե՛ք օրական առնվազն 2 լիտր ջուր, շոգ օրերին՝ ավելի շատ: Երեխաներին, տարեցներին հիշեցրե՛ք՝ հաճախակի ջուր խմեն, նույնիսկ եթե ծարավ չեն:

Խուսափե՛ք քաղցր, գազավորված ու ալկոհոլային խմիչքներից. դրանք ավելացնում են ջրազրկման ռիսկը:

11:00-ից 17:00-ն ընկած ժամանակահատվածում խուսափե՛ք արեւի ուղիղ ճառագայթներից: Օգտագործե՛ք լայնեզր գլխարկ, արեւապաշտպան ակնոց, բաց գույնի եւ թեթեւ հագուստ: Մաշկի բաց հատվածների վրա կիրառե՛ք արեւապաշտպան քսուք՝SPF 30 եւ ավելի:

Մի՛ թողեք երեխաներին կամ տարեցներին մեքենայի մեջ՝նույնիսկ կարճ ժամանակով:

Սննդային թունավորումներից խուսափելու համար անհրաժեշտ է առավել ուշադիր լինել սննդամթերքի պահպանման հարցում: Խուսափե՛ք կիսաեփ կամ փողոցային կասկածելի սննդից, ձեռքերը հաճախակի լվացե՛ք, հատկապես՝ ուտելուց առաջ, ինչպես նաեւ սննդամթերքն օգտագործելուց առաջ լավ լվացե՛ք հոսող ջրով:

Օգտագործե՛ք մաշկի վրա կիրառվող պաշտպանիչ միջոցներ, պատուհաններին՝ ցանցեր: Խուսափե՛ք ջրափոսերի կամ լճակների մոտ բացօթյա գիշերելուց. մոծակները հատկապես բազմանում են այդ վայրերում:

«ԹԻՄ ՏԵԼԵԿՈՄԸ»՝ «ՍԵՎԱՆ ՍՏԱՐՏԱՓ ՍԱՄՄԻԹ»-ՈՒՄ

# ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՈԼՈՐՏԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

**Team Telecom Armenia-ն՝ որպես տեխնոլոգիական գործընկեր, այս տարի եւս ամռան ամենամասշտաբային նորարարական նախագծի՝ «Սեւան Ստարտափ Սամմիթ»-ի կողքին էր: Վրանային բիզնես ֆորումի աշխարհագրությունը 2025-ին էապես ընդլայնվել է՝ մեկ շաբաթում Սեւանի ավազանում համախմբելով շուրջ 15 000 մասնակցի աշխարհի 40 երկրից:**

Սամմիթի ընթացքում անցկացվող CampFire Talk-ին ելույթներով են հանդես եկել Team Telecom Armenia-ի համահիմնադիրներ Հայկ եւ Ալեքսանդր Եսայանները՝ անդրադառնալով տելեկոմ եւ վերականգնվող էներգիայի ոլորտների զարգացմանն ու հեռանկարներին, ինչպես նաեւ Հայաստանում գերիզոր AI կենտրոնի կառուցմանը:

Team Telecom Armenia-ի գլխավոր տնօրեն Հայկ Եսայանը կարեւորել է «Սեւան Ստարտափ Սամմիթ»-ում մեծ ենթակառուցվածքային ընկերության եւ IT համայնքի միջեւ երկխոսությունը:

«Մենք՝ որպես տեխնոլոգիական մեծ ենթակառուցվածքներ ունեցող եւ զարգացնող ընկերություն, այստեղ ենք՝ ներկայացնելու, թե ուր է գնում տելեկոմ ոլորտը, եւ նորարարություններն ինչպես են ազդում ոլորտի ու դրանում ընթացող փոփոխությունների վրա: Միաժամանակ, սա հրաշալի հարթակ է՝ ծանոթանալու նոր, թարմ գաղափարների, տեսնելու՝ ինչ մտքեր են գեներացնում մեր երիտասարդները, դեպի ուր են նայում, եւ ինչպես կարող ենք համադրել տեխնոլոգիական տարբեր ոլորտները»,-ասում է Հայկ Եսայանը:

«Սեւան Ստարտափ Սամմիթ» նախագծի տնօրեն Վահագն Ռափյանը նշում է՝ վրանային բիզնես ֆորումի աշխարհագրության մեծացումն էապես նպաստում է նորանոր նախաձեռնությունների մեկնարկին:

«Փորձել ենք այս տարի Սամմիթը դարձնել միջոցառումների պլատֆորմ եւ անցկացրել ենք տարբեր ոլորտային միջոցառումներ ու կրթական ծրագրեր: Այս ամենի հարթ ու արդյունավետ ընթացքի համար կարեւոր է մեր գործընկերների դերակատարումը: Արդեն երկար տարիներ ավանդաբար համագործակցում ենք Team Telecom Armenia-ի հետ, որը շուրջ 40 հեկտար տարածքում, որտեղ ենթակառուցվածքներն այդքան էլ զարգացած չեն, ապահովում է մեր որակյալ ինտերնետ կապը»,-ասում է Վահագն Ռափյանը:

Այս տարի եւս Սամմիթի շրջանակում անցկացվել է Sevan EV Rally-ն, որի մասնակից էլեկտրամեքենաների լիցքավորումն իրականացվել է Team Energy-ի՝ հատուկ ավտովագքի համար տեղադրված արագ լիցքավորման կայաններում: Միջոցառման նպատակն էր ուշադրություն հրավիրել Սեւանի էկոմիջավայրի վրա:

Հավելենք, որ մինչ օրս նախագծի 12 միջոցառումներին ներգրավվել է մոտ 60 000 մասնակից աշխարհի շուրջ 60 երկրից: Ավելի քան 1700 ստարտափ ընկերություններից շատերը գրանտային մրցանակներ են ստացել շուրջ 650 000 ԱՄՆ դոլարի հասնող մրցանակային ֆոնդից: Նախագծի շրջանակում կատարված ներդրումների եւ ներդրումային պայմանավորվածությունների չափը գերազանցում է 5 միլիոն ԱՄՆ դոլարը:

***Տեղեկություն՝***
***Team Telecom Armenia-ի մասին***

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն (ապրանքանիշը՝ Team Telecom Armenia) հայկական ընկերություն է, որը առաջատար դիրք է զբաղեցնում երկրի հեռահաղորդակցության եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում: Հանդիսանալով Հայաստանում առաջին տելեկոմ ցանցի ժառանգորդը՝ ընկերությունը ունի ոլորտում ծառայությունների մատուցման ավելի քան 100 տարվա պատմություն: Team-ը տրամադրում է բջջային եւ ֆիքսված ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ թե՛ անհատ, թե՛ կորպորատիվ բաժանորդներին: Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակներում ընկերությունն աջակցում է տեխնոլոգիական, կրթական ու գիտական, ինչպես նաեւ բնապահպանական նախագծերի իրագործմանը, նպաստում հայկական բովանդակության ստեղծմանն ու տարածմանը, մարզերի զարգացմանը ու թիմային ոգին խրախուսող մարզաձեւերի ու նախաձեռնությունների իրականացմանը:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

- ք. Երեւան, Արաբկիր, Ն. Դումանի փողոց, 19 հասցեում գտնվող 275,2 ք.մ. բնակելի տուն, 19,9 քմ ավտոտնակ եւ 0,04218 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 95800000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա, Ա. Բաբաջանյան փողոց, 12 շենք, 12 հասցեում գտնվող 68.3 ք.մ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 30300000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 18.08.2025թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 18.09.2025թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ-ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝

ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը,

իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով:Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am , www.borsa.am կայքերը:

*«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

## ՄՇԱԿՈՒՅԹ

ԶԵՆՔԻ ՈՒ ԳՐԻ ՋԻՆՎՈՐԸ

# ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՑԵՐԵԿՈՒՅԹ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՎԻԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԻՆ

**Հուլիսի 29-ին Ավետիք Իսահակյանի անվան գրադարանում անցկացվեց գրական ցերեկույթ-հանդիպում՝ համախմբելով հայրենասեր ու ընթերցասեր մարդկանց: Օրվա հերոսն էր արձակագիր, ազատամարտիկ Հովիկ Վարդումյանը, ով օրեր առաջ՝ հուլիսի 26-ին, նշեց իր 85-ամյակը: Հոբելյանական ցերեկույթը կրում էր խորհրդանշական՝ «Զինվոր զենքի ու գրի» խորագիրը:**

Տարիներ շարունակ Վարդումյանի գրական խոսքն ու անձնական օրինակը միահյուսվել են: Միջոցառմանը ներկա էին նրա գրչակից ընկերները, մտավորականներ, ընթերցողներ: Արձակագիր Կարինե Ռաֆայելյանը, հրապարակախոս Գեւորգ Յազիչյանը, երգահան Արսեն Համբարյանը եւ այլ հյուրեր գնահատանքի խոսքեր հղեցին գրողին՝ նշելով նրա գրական ժառանգության, քաղաքացիական կեցվածքի ու մարդկային բացառիկ տեսակի մասին:

Վարդումյանը գրական գործունեությունն սկսել է դեռեւս 1970-ականներին՝ բանաստեղծություններով, որոնք տպագրվել են խորհրդային մամուլում: Ժամանակի հետ գրական փորձն ու աշխարհայացքի նոր ընկալումը նրան տարան դեպի արձակ: Սակայն ճակատագրական շրջադարձը եղավ Արցախյան առաջին պատերազմի տարիներին: Նա այն առաջին մտավորականներից էր, ով գրիչը փոխարինեց զենքով՝ մասնակցելով ազատագրական պայքարին: Այս առիթով հեղինակը հիշում է. «....երբ սկսվեց (Արցախյան) շարժումը, եւ ամենօրյա միտինգներից փոթորկվում էր մայրաքաղաքը, ես այնտեղ էի՝ Ազատության հրապարակում: Իսկ երբ սկսվեցին թշնամական ոտնձգությունները մեր սահմանների հանդեպ, հասկացա, որ միտինգներով ոչինչ չես անի, հարկավոր է ջոկատ կազմել ու զինվել: Ասացի՝ տղերք, մենք այստեղ անելիք չունենք, եւ համախոհներիս հետ կազմավորեցինք «Դավիթ Բեկ» ջոկատը ու առաջին հերթին շտապեցինք վտանգված Երասխ...»:

Ազատամարտի հիշողությունները գրի վերածելու Վարդումյանի ձգտումը սկիզբ առավ դեռ 1997 թվականին՝ «Այսպես են մեռնում արծիվները» վիպակով: Այնուհետեւ լույս տեսան պատմվածքների ժողովածուներ, վավերագրական եւ գեղարվեստական գրքեր՝ «Լաբիրինթոս», «Զրույցներ Հրանտ Մաթեւոսյանի հետ», «Շուշիի ազատագրումը», «Կանթեղ», «Բաժանարար գիծ», «Փոքր Միհերի վերադարձը. Կանթեղ 2» եւ այլ գործեր:

Վավերագրությունը Վարդումյանի գրական ոճի հիմքերից մեկն է: Նրա՝ «Այսպես են մեռնում արծիվները», «Գրոհայինների հրամանատարը», «Շուշիի ազատագրումը», «Զինվորները ծնվում են մարտադաշտում» գրքերը ոչ միայն փաստագրումն են պատերազմի իրողությունների, այլեւ փոխանցում են ազգային մղումների ազնիվ հոգեբանությունը: Հեղինակը վերապրածի անկեղծությամբ է նկարագրում մարտերը, ներկայացնում՝ ինչպես է կերտվում հաղթանակը:

Պատերազմի թիկունքում ծնված ստեղծագործություններն առավել խոր շեշտադրում են ստացել «Բաժանարար գիծ» ժողովածուում, որտեղ արձակագրի ուշադրության կենտրոնում արդեն ոչ թե միայն ռազմի դաշտն է, այլ այն հոգեբանական վերքը նաեւ, որը պատերազմը թողնում է մարդու մեջ: Այդ պատմվածքներում է գրողը բացահայտում «պատերազմի անմարդկային դեմքը»:

2022 թվականին՝ 44-օրյա պատերազմի ցավալի պարտությունից հետո, Վարդումյանը կարողացավ վերամշակել եւ լույս ընծայել իր հերթական գիրքը՝ «Զինվորները ծնվում են մարտադաշտում» վավերագրական վեպը: Ինչպես նշել է ինքը՝ գիրքն ավարտել էր տարիներ առաջ, սակայն չէր ցանկանում այն հրատարակել. «Պարտությունից հետո մտածում էի՝ արժե՞, թե՞ ոչ: Հետո հասկացա՝ պարտվողական տրամադրությունը չի կարող գերակշռել: Եկող սերունդները պիտի իմանան նաեւ մեր փառավոր հաղթանակների մասին եւ պատերազմի գնան հաղթանակի հավատով: Քանզի հաղթում է ոչ միայն զենքը, այլեւ ոգին»:

Վարդումյանի գրականությանը բնորոշ է ճշմարտության ձգտումը: Նա չի խուսափում մատնանշելու մեր ժամանակի թերացումները, սխալներն ու բարոյական անկումները, բայց նաեւ առաջարկում է օրինակելի կերպարներ՝ ներքին ուժով, նվիրումով եւ հավատով ձեւավորված: Այդպիսի կերպարներով է լեցուն «Փոքր Միհերի վերադարձը» վեպը, որտեղ ընթերցողը ծանոթանում է «Հայկազուններ» խմբին՝ երիտասարդ հայրենասերներին, որոնք պատրաստ են իրենց կյանքը նվիրել հայրենիքին: Հետաքրքիր է, որ գրականությունից դուրս այդ գաղափարը շարունակություն է ունեցել նաեւ իրական կյանքում. 2019 թվականին Վարդումյանը ստեղծեց «Հայկազուններ» միաբանությունը՝ փորձելով իր հերոսների «Հայկազուններին» գտնել եւ միավորել նաեւ իրական կյանքում՝ դառնալով իր «ծրագրի» գործնական առաջամարտիկը:

Հոբելյանական միջոցառումն ուղեկցվեց ջերմ մթնոլորտով, գնահատանքի խոսքերով եւ գրական խոսքի արժեքն ամրապնդող մտքերով:

Հովիկ Վարդումյանի գրական ուղին շարունակվում է՝ անջնջելի ներդրում թողնելով մեր ազգային ու գրական կյանքում:

*ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ*

ԿԻՐԱԿԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԹԵԺ Է ԼԻՆԵԼՈՒ

# ՋԵՆԻՖԵՐ ԼՈՊԵՍԻ ՀԱՄԵՐԳԻ ՏՈՄՍԵՐԸ ԳՐԵԹԵ ՍՊԱՌՎԱԾ ԵՆ

**Համաշխարհային աստղ Ջենիֆեր Լոպեսի «UP ALL NIGHT» շրջագայության շրջանակում Հայաստանում անցկացվող համերգին հաշված օրեր են մնացել:**

Նշենք, որ այս ամառ Լոպեսը ելույթ է ունենալու իր օտարերկրացի երկրպագուների համար՝ լինելով ոչ միայն Հայաստանում, այլեւ Իսպանիայում, Ղազախստանում, Լեհաստանում, ԱՄԷ-ում, Հունգարիայում, Եգիպտոսում եւ այլ երկրներում:

«JLoLiveIn2025 շոուի տոմսերի վաճառքը կսկսվի ապրիլի 29-ին՝ Երեւանի ժամանակով ժամը 12:00-ին», - այս մասին գրել էր երգչուհին:

Նշենք, որ ապրիլից մեկնարկած տոմսեր վաճառքը կարծես թե մոտենում է ավարտին: ArmLur.am-ը հայտնել էր, որ համերգի տոմսերն արժեն 25 000-180 000 դրամ:

Ֆան զոնայում՝ անմիջապես բեմի դիմաց լինելու համար, երկրպագուները կվճարեն 55 000 դրամ, կանգնած հատվածում եւ որոշ նստատեղերում՝ 35 000 դրամ, հենց այս տոմսերն են, որոնք դեռ հասանելի են մնացել: Մնացած նստատեղերի համար տոմսերը կարժենան 50 000 դրամ, 55 000 դրամ, 60 000 դրամ: Այս տոմսերի մեծ մասը սպառվել է:

Բեմի աջ կողմում էլ կլինեն ամենաթանկ տոմսերը՝ 180 000 դրամ արժողությամբ. իսկ այս տոմսերը դեռեւս ամբողջությամբ չեն սպառվել:

Հիշեցնենք, որ Ջենիֆեր Լոպեսի երեւանյան համերգը կայանալու է Վազգեն Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտում օգոստոսի 3-ին:

*ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ*

ՄԱՐԶԱԿԱՆ

## ՍՊԵՐՑՅԱՆԻՆ ՆՈՐ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿԱՌԱՋԱՐԿՎԻ

«Կրասնոդարը» պատրաստվում է նոր պայմանագիր առաջարկել թիմի ավագ Էդուարդ Սպերցյանին՝ բարելավված պայմաններով: Նրա գործող պայմանագիրը ուժի մեջ է մինչեւ 2026 թվականը, հայտնում է Metaratings.ru-ն:

25-ամյա Էդուարդ Սպերցյանն իր ողջ կարիերան անցկացրել է «Կրասնոդար» ակումբում: Նա մասնակցել է 144 հանդիպման, խփել 44 գոլ եւ կատարել 32 գոլային փոխանցում: Նրա պայմանագիրը ակումբի հետ գործում է մինչեւ 2026 թվականի հունիսը:

Ըստ Transfermarkt-ի՝ ֆուտբոլիստի շուկայական արժեքը կազմում է 25 միլիոն եվրո:

## ՆԵՅՄԱՐԸ ԿԱՐՈՂ Է ԼՔԵԼ «ՍԱՆՏՈՍԸ»

Բրազիլացի աստղային հարձակվող Նեյմարը կարող է վերադառնալ Եվրոպա այս ամառային տրանսֆերային պատուհանի ընթացքում եւ միանալ ֆրանսիական «Մարսելին»: Այս մասին հայտնում է TyC Sports-ը:

Աղբյուրի տեղեկություններով՝ ֆրանսիական ակումբը ցանկանում է մոտ ապագայում համաձայնության գալ 33-ամյա բրազիլացու տրանսֆերի շուրջ: Նշվում է, որ Նեյմարը պատրաստ է լքել «Սանտոսը» երկրպագուների հետ ունեցած կոնֆլիկտի պատճառով: Հարձակվողը նախընտրում է միանալ «Մարսելին», որը նոր մրցաշրջանում հանդես կգա Չեմպիոնների լիգայի խմբային փուլում: Ավելին՝ նշվում է, որ կողմերի միջեւ արդեն բանակցություններ են ընթանում:

Հիշեցնենք, որ Նեյմարը վերադարձել էր «Սանտոս» 2024-ի ձմեռային տրանսֆերային պատուհանի ժամանակ: Մինչ այդ նա հանդես էր եկել «Ալ-Հիլալում», ՊՍԺ-ում եւ Բարսելոնայում»:

## ՏՈՏԻԻ ՈՐԴԻՆ ԱՎԱՐՏԵԼ Է ԿԱՐԻԵՐԱՆ

2006 թվականի աշխարհի չեմպիոն Ֆրանչեսկո Տոտիի որդին՝ Քրիստիան Տոտին, 19 տարեկանում որոշել է ավարտել պրոֆեսիոնալ ֆուտբոլային կարիերան: Այս մասին նա հայտնել է La Nuova Sardegna-ին. «Այո, ես ավարտում եմ կարիերաս, որոշումս վերջնական է», - ասել է նա:

Քրիստիանի նախկին մարզիչ Մարկո Ամելիան, ով աշխատել է նրա հետ «Օլբիա» ակումբում, Tuttosport-ին ասել է. «Նրա՝ Տոտիի որդի լինելը ազդել է նրա խաղի գնահատականների վրա: Իմ կարծիքով՝ նա կարող էր հաջող կարիերա ունենալ Սերիա C-ում եւ Սերիա B-ում»:

Քրիստիան Տոտին մանկուց խաղացել է «Ռոմայի» համակարգում, ներկայացրել է նաեւ «Ֆրոզինոնեի» եւ իսպանական «Ռայո Վալեկանոյի» երիտասարդական թիմերը: Նրա վերջին ակումբը եղել է «Օլբիան», որից նա հեռացել է նախորդ տարվա վերջում:

Աղբյուրի համաձայն՝ Քրիստիան Տոտին կշարունակի աշխատել որպես սկաուտ իր հոր հիմնադրած ֆուտբոլային ակադեմիայում:

*● Օգոստոսի 17-ին՝ 20:30-ին, «Թատրոն տանիքում» տեղի կունենա «Բարեւ, սիրելիս» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 5000-7000 դրամ:*

# ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

## ԿՐԹԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել, թե որ դեռևում կարող է 1-ին կուրսի առաջին կիսամյակում սովորողն օգտվել ուսման վարձի զեղչից:**

*Արմինե Սարգսյան*
*(45 տարեկան, տնային տնտեսուհի)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Ա. Սարգսյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունված եւ ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող 1-ին կուրսի ուսանողներին, ըստ սահմանված չափերի, համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում տրամադրվում է պետության կողմից ուսանողական նպաստի ձեւով ուսման վճարի մասնակի փոխհատուցում: Բակալավրի եւ ինտեգրացված կրթական ծրագրով սովորողների համար հաշվի են առնում ընդունելության քննություններից ստացած գումարային գնահատականը, իսկ մագիստրատուրայի ուսանողների համար՝ բակալավրի կրթական ծրագրի միջին որակական գնահատականը /ՄՈԳ/:

*ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Նշենք, որ Հայաստանի Հանրապետության երկքաղաքացիների եւ օտարերկրացիների, օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատությունները տվյալ ուսումնական տարում ավարտած Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, նույն տարվա գարնանային զորակոչից զորացրված կամ մինչեւ հուլիսի 31-ը զորացրվող դիմորդների, նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տվյալ տարվա շրջանավարտների փաստաթղթերն ընդունվում են հունիսի 25-ից մինչեւ հուլիսի 2-ը:

*Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ*

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ որոնք են խնամատարության սահմանված ժամկետները:**

*Լարիսա Հարությունյան (59 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Հայտնում ենք, որ խնամատարությունը կարող է լինել կարճաժամկետ եւ երկարաժամկետ՝ մինչեւ երեխայի չափահաս դառնալը:

Կարճաժամկետ խնամատարությունը կիրառվում է մինչեւ մեկ ամիս ժամկետով, անհրաժեշտության դեպքում՝ եւս մեկ ամիս երկարաձգելու հնարավորությամբ, եթե սույն օրենսգրքով առավել սեղմ ժամկետ նախատեսված չէ: Կարճաժամկետ խնամատարության ժամկետի ավարտից հետո, եթե հնարավոր չէ երեխային վերադարձնել կենսաբանական կամ խնամակալի ընտանիք, իսկ խնամատար ընտանիքը պատրաստ է շարունակել երեխայի խնամքը եւ դաստիարակությունը, ապա նախապատվությունը տրվում է նույն ընտանիքում խնամատարության ժամկետը երկարաձգելուն:

Երկարաժամկետ խնամատարությունը կիրառվում է մեկ տարի եւ ավելի ժամկետով: Երկարաժամկետ խնամատարության պայմանագրի երկարաձգում թույլատրվում է, եթե երեխայի վերադարձն ընտանիք կամ երեխայի որդեգրումը կամ խնամակալությունը (հոգաբարձությունը) հնարավոր չէ:

*ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Տեղեկացնենք, որ երեխայի խնամքը եւ դաստիարակությունը ճգնաժամային կամ արձակուրդային խնամատար ընտանիքում կազմակերպելու նպատակով այդ երեխայի տվյալները համադրում է հաշվառված մասնագիտացված խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց տվյալների հետ:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ «Ժողովուրդ» օրաթերթի*

Ակնհայտ է՝ վարորդը սիրում է BMW անկախ նրանից՝ ինչ մեքենա է վարում:

Opel-ի մակնիշի մեքենայի հետնապակու գրությունն էլ հուշում է, որ նա պարզապես հումորով է մոտենում ավտոմշակույթին:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

**«Հայփոստ» ՊՓԲԸ**
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

## ԱՌԱՋԱՐԿ
## հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| Շիրակ | +12 + 17<br>+28 + 32 |
| Կոտայքի լեռներ | +11 + 16<br>+28 + 31 |
| Կոտայքի նախալեռներ | +21 + 24<br>+33 + 36 |
| Գեղարքունիք | +11 + 16<br>+27 + 30 |
| Լոռի | +13 + 17<br>+28 + 32 |
| Տավուշ | +20 + 23<br>+33 + 37 |
| Արագածոտնի լեռներ | +12 + 15<br>+28 + 30 |
| Արագածոտնի նախալեռներ | +20 + 24<br>+34 + 38 |

| | |
|---|---|
| Արարատ | +21 + 25<br>+37 + 40 |
| Արմավիր | +21 + 24<br>+38 + 40 |
| Վայոց ձորի լեռներ | +13 + 16<br>+27 + 30 |
| Վայոց ձորի նախալեռներ | +22 + 25<br>+36 + 40 |
| Սյունիքի հովիտներ | +21 + 25<br>+37 + 40 |
| Սյունիքի նախալեռներ | +14 + 18<br>+28 + 32 |
| ԼՂՀ | +20 + 24<br>+36 + 39 |
| Երեւան | +26 + 29<br>+37 + 40 |

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **30.7.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*